ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, բարտուղարություն 374-001, ֆաքս 370-296

№ 4/44 «25» 01 2021 թ.

Ձեր

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 49557658)
տնօրեն՝ Ս. Մկրտչյան
ք. Երևան, Ս. Դավիթի 13/27
էլ. հասցե՝ elit.sv@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության զորքերի և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով՝ ավտոպահեստամասերի ձեռքբերման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2021թ-ի հունվարի 25-ին միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից:

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

գնդապետ ***Հ. Բաբայան***